## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N2
## ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-19/77 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ ՆԻՍՏԻ

**Մասնակցում էին՝**

**Հանձնաժողովի նախագահ՝**

Արմեն Գևորգյան՝ ԱԻՆ շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության պետի տեղակալ

**Անդամներ՝ ԳՊ/ԳԱ գնահատող անձնակազմ**

Գարիկ Բոյաջյան՝ փրկարար ծառայության թիկունքի և նյութատեխնիկական ապահովման վարչության պլանավորման, հաշվառման և վերլուծության բաժնի պետ.

Հայկ Ծատուրյան՝ ԱԻՆ իրավական ապահովման և միջազգային պայմանագրերի վարչության օրենսդրության կատարելագործման բաժնի առաջատար մասնագետ.

**Անդամներ՝ ԳՊ/ԲԱ – բացող անձնակազմ**

Արմենուհի Մկոյան՝ ԱԻՆ ֆինանսատնտեսագիտական վարչության ֆինանսաբյուջետային բաժնի պետ.

Տիգրան Ալեքսանյան՝ ԱԻՆ խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող.

**Հանձնաժողովի քարտուղար՝**

Արմինե Գալուստյան՝ ԱԻՆ շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության գնումների կազմակերպման բաժնի գլխավոր մասնագետ.

**1. Տեղեկություն հայտերի բացման վայրի, օրվա, ժամի մասին**

**1.1** Անվադողերի ձեռքբերման նպատակով ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-19/77 ծածկագրով ընթացակարգի հրավերը Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ս.թ. սեպտեմբերի 13-ին հրապարակվել է գնումների էլեկտրոնային համակարգում՝ www.armeps.am կայքում և գնումների պաշտոնական տեղեկագրում:

**1.2** Գնային առաջարկ պարունակող հայտերը բացվել են էլեկտրոնային եղանակով 20.09.2019թ., ժամը 10.00-ին:

**1.3** ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-19/57 ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նախագահը հայտարարեց ձեռքբերվող ծառայության նախահաշվային գինը մեկ թվով արտահայտված:

**1.4 Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները, տվյալները**

| N | Մասնակցի անվանումը | Հասցեն, էլ. փոստը |
|---|---|---|
| 1 | «Բիգ Պլաստ» ՍՊԸ | Ք. Երևան Տիգրան Մեծի 29, salesarmplast@gmail.com |

**2. Տվյալներ՝ հայտերը կազմելու, ներկայացնելու, սահմանված կարգի պահանջներին համապատասխանության և բացված հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին**

2.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան,

2.2 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը և համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

**3. Նախահաշվային գները, մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները.**

ՀՀ դրամ

| Չ/հ | գնման առարկայի անվանումը | մասնակիցներ | նախահաշվային գին | գնային առաջարկները | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | առանց ԱԱՀ | ԱԱՀ | ընդհ. գինը |
| 1 | Ավտոմեքենաների անիվներ /Անվադողդ 235/75 R15 | «Բիգ Պլաստ» ՍՊԸ | 244 000 | 200 000 | 40 000 | 240 000 |

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

***4. Հանձնաժողովը որոշեց.***

4.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (Կարգ) 40-րդ կետի 5-րդ ենթակետով՝ «Բիգ Պլաստ» ՍՊԸ-ն ճանաչել առաջին տեղը զբաղեցրած մասնակից 1-ին չափաբաժնով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

4.2 Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ ՀՀ ԿԱ Պետական եկամուտների կոմիտեից կատարել հարցում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

4.3 Ղեկավարվելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին ծանուցել՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել իրավերով պահանջվող Կարգի 32 կետի «զ» պարբերությամբ սահմանված առաջարկվող ապրանքների բնութագրերը (ամբողջական նկարագիր):

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

4.4 ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-19/77 ծածկագրով էլեկտրոնային ձևով գնանշման հարցման ընթացակարգի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել Կարգի 46-րդ կետով սահմանված ժամկետում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

**Հանձնաժողովի**

նախագահ՝ ____________ Ա. Գևորգյան

անդամներ՝ ____________ Գ. Բոյաջյան

____________ Հ. Ծատուրյան

____________ Ա. Մկոյան

____________ Տ. Ալեքսանյան

քարտուղար՝ ____________ Ա. Գալուստյան